ՀՈՎՍԵՓԻ ԿՅԱՆՔԸ. ԲԱՆՏԻՑ ՄԻՆՉԵՎ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԾՆՆԴ. 41.1-57

1 Երկու տարի հետո փարավոնը երազ տեսավ. ահա նա կանգնել էր գետի եզերքին:

- ***Երբեմն մեր արած լավ բանն անվարձահատույց է թվում:***
- ***Սպասելը քրիստոնեական կյանքում սովորական թեմա է:***

2 Եվ ահա գետից դուրս ելան գեղեցիկ տեսքով ու պարարտ մարմնով յոթ երինջներ և արածում էին եղեգների մեջ: 3 Եվ ահա դրանց ետևից գետից դուրս ելան ուրիշ յոթ երինջներ՝ տեսքով զազրելի և մարմնով վտիտ, ու կանգնեցին մյուս երինջների մոտ՝ գետի եզերքին: 4 Եվ զազրելի տեսքով ու վտիտ մարմնով երինջները կերան տեսքով գեղեցիկ ու պարարտ այն յոթ երինջներին: Եվ փարավոնը զարթնեց: 5 Նա նորից քնեց և երկրորդ անգամ երազ տեսավ: Ահա մեկ ցողունից դուրս էին գալիս յոթ լեցուն և լավ հասկեր: 6 Եվ նրանց ետևից բուսնեցին յոթ վտիտ ու խորշակահար հասկեր: 7 Այդ վտիտ հասկերը կուլ տվեցին ուռճացած և լեցուն մյուս յոթ հասկերին: Փարավոնը զարթնեց և տեսավ, որ երազ էր: 8 Առավոտյան խռովվեց նրա հոգին: Նա կանչել տվեց Եգիպտոսի բոլոր մոգերին ու նրա բոլոր իմաստուններին, և փարավոնը պատմեց նրանց իր երազները, բայց չգտնվեց մեկը, որ կարողանար դրանք մեկնել փարավոնի համար:

9 Եվ մատռվակապետը խոսեց փարավոնի հետ՝ ասելով. Ես այսօր հիշում եմ իմ հանցանքները: 10 Փարավոնը բարկացել էր իր ծառաների վրա և ինձ ու հացագործապետին դրել էր դահճապետի տան բանտը: 11 Ես ու նա նույն գիշերը երազ տեսանք. մեզանից ամեն մեկն իր երազը՝ առանձին նշանակությամբ: 12 Այնտեղ մեզ հետ եբրայեցի մի պատանի կար՝ դահճապետի ծառան: Մենք պատմեցինք նրան, և նա մեկնեց մեզ մեր երազները՝ ամեն մեկիս տալով իր երազի մեկնությունը: 13 Եվ ինչպես որ նա մեկնել էր, այնպես էլ կատարվեց: Նա ինձ իմ պաշտոնին վերադարձրեց, իսկ նրան կախել տվեց:

14 Փարավոնը մարդ ուղարկեց և կանչեց Հովսեփին:

I. ՄԱՏՌՎԱԿԱՊԵՏԸ ՀԻՇԵՑ ՀՈՎՍԵՓԻՆ

THE CHIEF CUPBEARER REMEMBERED JOSEPH.

14 Փարավոնը մարդ ուղարկեց և կանչեց Հովսեփին: Շուտով նրան հանեցին բանտից: Նա ածիլվեց, փոխեց իր հանդերձները և եկավ փարավոնի մոտ: 15 Փարավոնն ասաց Հովսեփին. Երազ եմ տեսել, և չկա մեկը, որ մեկնի այն: Ես լսել եմ քո մասին. ասում են, որ դու կարող ես երազներ մեկնել: 16 Եւ Հովսեփը պատասխանեց փարավոնին և ասաց. Ոչ թէ ես. Աստուած կտա խաղաղութեան պատասխան Փարաւօնին:

- ***Ծննդոց գրքում դուք կարող եք գտնել երեք անգամ արձանագրված, երբ «Աստված հիշեց» (Ծննդոց 8.1; 19.29; 30.22): Այդ համարները խոսում են այն մասին, որ Աստված հիշում է Նոյին, Աբրահամին և Ռաքելին: Նրանք առաջինն են այն բազմաթիվ դեպքերից, երբ Աստծո Խոսքն ասում է, որ նա հիշել է ինչ-որ բան կամ ինչ-որ մեկին:***

  Արդյո՞ք դա նշանակում է, որ Աստված մոռացել էր նրանց: Իհարկե ոչ:

ԾՆՆԴՈՑ 8.1 – Աստված հիշեց Նոյին և բոլոր կենդանիներին ու բոլոր անասուններին, որ նրա հետ տապանում էին: Աստված քամի բերեց երկրի վրա, և ջրերը նվազեցին:

ԾՆՆԴՈՑ 19.29 – Երբ Աստված այդ դաշտավայրի քաղաքները կործանում էր, Աստված հիշեց Աբրահամին. և Ղովտին դուրս բերեց այդ կործանումի միջից, երբ կործանում էր այն քաղաքները, որոնց մեջ բնակվում էր Ղովտը:

ԾՆՆԴՈՑ 30.22 – Աստված հիշեց Ռաքելին. և Աստված լսեց նրան ու նրա արգանդը բացեց:

17 Եւ Փարաւօնն ասեց Յովսէփին...

25 Եւ Յովսէփն ասեց Փարաւօնին. Փարաւօնի երազը մէկ է.

II. ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ – ԻՆՉ?

A REVELATION – WHAT?

- ***Ես երազ եմ տեսել, և չկա մեկը, ով կարող է մեկնաբանել այն: Փարավոնի երազը իրականում Աստծո հայտնությունն էր: Նա ստացել է այն, բայց չի կարողացել հասկանալ:***

26 Այն եօթը լաւ երինջները եօթը տարի են, եւ այն եօթը լաւ հասկերը եօթը տարի են. Երազը մէկ է:
27 Եւ այն եօթը վտիտ եւ զազիր երինջները, որ նորանց ետեւից ելան՝ եօթը տարի են, եւ այն եօթը դատարկ խորշակահար հասկերը եօթը տարի սով են նշանակում: 28 Այս է իմ խօսքը որ ասում եմ Փարաւօնին. Թէ Աստուած իր անելիքը Փարաւօնին ցոյց է տվել: 29 Ահա Եգիպտոսի ամբողջ երկրում յոթ տարի մեծ առատություն կլինի: 30 Դրանից հետո կգան սովի յոթ տարիներ, և Եգիպտոսի երկրում կմոռացվի այդ ամբողջ առատությունը, և սովը կսպառի երկիրը, 31 Եւ չի իմացվի երկրում առատությունն այն սովի պատճառով, որ դրանից հետո կգա, որովհետև սովը շատ սաստիկ կլինի:

32 Փարավոնի երազի երկու անգամ կրկնվելու պատճառն այն է, որ այս բանը Աստծու կողմից հաստատված է, և Աստված շուտով կատարելու է այն:

III. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ – ԻՆՉՊԵՍ:

REVELATION AND WORD OF KNOWLEDGE – HOW?

33 Եւ հիմա թող Փարավոնն այժմ հանճարեղ և իմաստուն մարդ գտնի և նրան նշանակի Եգիպտոսի երկրի վրա: 34 Թող փարավոնն այսպես անի. երկրի վրա գործակալներ նշանակի, որպեսզի Եգիպտոսի երկրի առատության յոթ տարիներին վերցվի բերքի մեկ հինգերորդ մասը (Մեկ հինգերորդը նշանակում է 20% հարկ): 35 Եվ թող հավաքեն գալիք այդ լավ տարիների ամբողջ պաշարը, փարավոնի ձեռքի տակ ցորեն դիզեն և քաղաքներում պաշար պահեն: 36 Եւ կերակուրը պաշար լինի երկրիս համար այն եօթը տարուայ սովի դէմ, որ Եգիպտոսի երկրում լինելու է, որ երկիրը սովից չկորչի: 37 Եւ այս բանը լաւ երեւեցաւ Փարաւօնի աչքին եւ նորա բոլոր ծառաների աչքին:

IV. ԱՍՏԾՈ ՀՈԳՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՍԵՓԻ ՄԵՋ

PHARAOH PERCEIVES THE PRESENCE OF GOD'S SPIRIT IN JOSEPH

*38 Եւ Փարաւօնն ասեց իր ծառաներին. Կարո՞ղ ենք գտնել սորա պէս մի մարդ, **որի մէջ լինի Աստուծոյ Հոգին**: 39 Եվ փարավոնն ասաց Հովսեփին. Քանի որ Աստված քեզ իմացրել է այս ամենը, ապա քեզ նման հանճարեղ և իմաստուն չկա:*

Սա առաջին հիշատակումն է Աստվածաշնչում Սուրբ Հոգու մասին, որը գալիս է մարդու վրա: Հետաքրքիր է նշել, որ դա վերաբերում էր ավելի գործնական բաներին: Հովսեփը կարիք չուներ քարոզելու կամ աղոթելու, որ փարավոնը տեսներ Աստծո Հոգին իր վրա: Նա դա կարող էր տեսնել իր բնավորության, իր ուղերձի, իր գիտելիքի, իր իմաստության և իր խոնարհության մեջ:

Ա Կորնթացիներին 12.4-11 – Պարգևները զանազան են, բայց պարգևողը նույն Հոգին է: Ծառայություններն էլ զանազան են, բայց դրանք տվողը նույն Տերն է: Գործերն էլ զանազան են, բայց նույն Աստված է, որ ամեն բան գործի է դնում ամենքի մեջ: Բայց ամեն մեկին Հոգու հայտնությունը օգուտի համար է տրված: Որովհետև մեկին Հոգուց իմաստության խոսք է տրված, մյուսին՝ գիտության խոսք՝ նույն Հոգու չափով, մյուսին՝ հավատ՝ նույն Հոգով, ուրիշին՝ բժշկության շնորհ՝ նույն Հոգով, մեկ ուրիշին՝ զորավոր գործեր, ուրիշին՝ մարգարեություն, ուրիշին՝ հոգիների զանազանում, մեկ ուրիշին՝ տարատեսակ լեզուներ, ուրիշին՝ լեզուների թարգմանություն: Բայց այս բոլորը հենց նույն Հոգին է գործի դնում՝ ամեն մեկին բաժանելով այնպես, ինչպես կամենում է:

III. ՀՈՎՍԵՓԻ ԿՅԱՆՔԸ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

JOSEPH'S LIFE AS PRIME MINISTER

*40 Դու իմ տան վրա՛ եղիր, և իմ ամբողջ ժողովուրդը թող հնազանդվի քո խոսքին: Ես միայն գահով քեզնից մեծ կլինեմ: 41 Փարավոնն ասաց Հովսեփին. Ահա քեզ դնում եմ Եգիպտոսի ամբողջ երկրի վրա: 42 Եվ Փարավոնն իր մատից հանեց մատանին և անցկացրեց Հովսեփի մատին, բեհեզյա զգեստներ հագցրեց նրան ու նրա պարանոցին ոսկե մանյակ դրեց: 43 Եվ իր երկրորդ կառքի մեջ նստեցրեց, և նրա առաջից գոչում էին. **Ծնկի՛ եկեք:** Այսպես Եգիպտոսի ամբողջ երկրի վրա նշանակեց նրան: 44 Եւ Փարաւոնն ասաց Հովսեփին. Ես փարավոնն եմ. առանց քեզ ոչ ոք իր ձեռքը կամ իր ոտքը չբարձրացնի Եգիպտոսի ամբողջ երկրի մեջ: 45 Եվ Փարավոնը Հովսեփի անունը դրեց **Փսոմփթոմփան** **«Աստված խոսում է և նա ապրում»**: Եվ Արեգ քաղաքի քուրմ Պետափրեսի աղջիկ Ասանեթին նրան կնության տվեց (priest of On):*

Եվ Հովսեփը ելավ շրջելու Եգիպտոսի երկիրը:

46 Եւ Յովսէփը երեսուն տարեկան էր, երբոր Եգիպտոսի Փարաւօն թագաւորի առաջին կանգնեց, եւ Յովսէփը Փարաւօնի առջեւից դուրս ելաւ եւ Եգիպտոսի բոլոր երկիրը ման եկաւ: 47 Առատության յոթ տարիներին երկիրը խիստ շատ արդյունք տվեց: 48 Եվ յոթ տարիների ամբողջ պաշարը, որ եղավ Եգիպտոսի երկրում, հավաքեց և ամբարեց քաղաքներում. ամեն մի քաղաքի շրջակա արտերի պաշարը նույն քաղաքում ամբարեց: 49 Հովսեփը ծովի ավազի չափ խիստ շատ ցորեն դիզեց, այնքան, որ մարդիկ դադարեցին հաշվելուց, որովհետև անթիվ էր:

*50 Սովի տարիների գալուց առաջ Հովսեփն ունեցավ երկու որդի, որ նրա համար ծնել էր Արեգ
քաղաքի քուրմ Պետափրեսի աղջիկ Ասանեթը: 51 Հովսեփն առաջնեկի անունը դրեց **Մանասէ**,
Որովհետև,- ասաց,- Աստված ինձ մոռանալ տվեց իմ բոլոր վշտերը և իմ հոր ամբողջ տունը: 52
Երկրորդի անունը դրեց **Եփրեմ**, Որովհետև,- ասաց,- Աստված ինձ աճեցրեց իմ տառապանքների
երկրում:*

*53 Եվ Եգիպտոսի երկրում առատության յոթ տարիներն անցան: 54 Երբ Հովսեփի ասածի պես
եկան սովի յոթ տարիները, բոլոր երկրներում սով եղավ, բայց Եգիպտոսի երկրում հաց կար: 55
Երբ Եգիպտոսի ամբողջ երկիրը քաղցեց, ժողովուրդը հացի համար աղաղակեց փարավոնին:
Փարավոնն ասաց բոլոր եգիպտացիներին. Գնացեք Հովսեփի մոտ. ինչ որ ասի ձեզ, կատարեք: 56
Հովսեփը բացեց բոլոր շտեմարանները, որոնց մեջ պաշար կար, և ցորեն էր վաճառում
եգիպտացիներին: 57 Սովը սաստկացավ Եգիպտոսի երկրում: Եվ բոլոր երկրներից գալիս էին
Եգիպտոս՝ ցորեն գնելու Հովսեփից, որովհետև սովը սաստկացել էր բոլոր երկրներում:*

ՀԱՐՑ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ

- ***Տասներկու տարի Հովսեփը սպասեց բանտում: Մտածեք ձեր կյանքի մի շրջանի մասին, որը թվում էր անիմաստ կամ անհետաքրքիր, բայց հետ նայելով՝ այժմ կարող եք տեսնել Աստծո կերտող ձեռքը ձեր կյանքում:***

  Ինչպե՞ս կամ ո՞ւմ միջոցով է Աստված գործել քո կյանքում:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ